

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՂ՝ Պ-518-19.03.2020-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| N | Առաջարկի հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը | Առաջարկի բովանդակությունը | Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը |
|---|-------------------------------|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի վերնագիր | Նախագծի վերնագրում նշված «ՀՀ» հապավումը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը և 18-րդ հոդվածի 3-րդ մասը: | | Ընդունվել է |
| 2 | ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 1-ին հոդված | <ol style="list-style-type: none"> 1. Նախագծի 1-ին հոդվածում օրենքի վերնագրից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը և 18-րդ հոդվածի 3-րդ մասը. 2. «21¹-րդ»-ը փոխարինել «21¹-ին»-ով: | | Ընդունվել է |

| | | | | | |
|---|--|---------------------|--|---|-------------|
| 3 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 1-ին հոդված | <p>Նախագծի 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրվող «ե» կետի.</p> <p>1. «արտահերթ տարեկան ժողովում» ձևակերպումը փոխարինել «արտահերթ ընդհանուր ժողովում» ձևակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը.</p> <p>2. վերջին նախադասությունից հանել «նաև» բառը՝ հաշվի առնելով այն, որ խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել միայն այն դեպքում, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Դրան նախորդող դրույթը վերաբերում է ոչ թե անդամների ընտրությանը, այլ քանակական կազմ:</p> | | Ընդունվել է |
| 4 | Կառավարություն | Նախագծի 2-րդ հոդված | <p>Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվում է մինորիտար մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին ընդհանուր ժողովին տեղեկատվության տրամադրման կարգը հանել օրենսդրական կարգավորման շրջանակից և այն սահմանել կանոնադրությամբ: Սակայն գտնում ենք, որ դա համահունչ չէ կորպորատիվ կառավարման առանցքային՝ տեղեկատվության բացահայտման և թափանցիկության սկզբունքին: Ներդրողները պահանջում են տեղեկատվություն տնօրենների խորհրդի անհատ անդամների ու առանցքային ղեկավարների վերաբերյալ՝ գնահատելու համար նրանց փորձն ու որակավորումը, քանի որ հենց նրանց են վերապահելու բանկի գործունեության ընդհանուր</p> | <p>Ընդունելի է:</p> <p>Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:</p> | Ընդունվել է |

| | | | | | |
|---|-------------------------------|---------------------|---|--|-------------|
| | | | ղեկավարումը: Ուստի խորհրդի անդամների մասին օրենքով պահանջվող տեղեկատվության ներկայացումը պետք է սահմանվի առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտով՝ օրենքով: | | |
| 5 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածի. 1. 4-րդ և 5-րդ մասերի համարակալումները դարձնել համապատասխանաբար՝ 3-րդ և 4-րդ. 2. մասերի համարներն տեքստից բաժանել կետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը: | | Ընդունվել է |
| 6 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածի հմասերի համարներն տեքստից բաժանել կետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը: | | Ընդունվել է |
| 7 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում 1. «1.1 մաս»-ը փոխարինել «1.1-ին մաս»-ով. 2. « <u>1.1</u> »-ը « <i>խորհրդի անդամի...</i> » բառերից առանձնացնել կետով՝ « <u>1.1. խորհրդի անդամի ...</u> »: | | Ընդունվել է |
| 8 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 4-րդ հոդված | Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող նախադասությունից հանել « <i>կամ վարկային կազմակերպության</i> » բառերը: | | Ընդունվել է |

| | | | | | |
|----|--|------------------------|--|--|-------------|
| 9 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 5-րդ հոդված | Նախագծի 5-րդ հոդվածի «փոխարինել «5), 11) և 13)» թվերով և բառով» ձևակերպումը փոխարինել «փոխարինել «5-րդ, 11-րդ և 13-րդ» թվերով և շաղկապով» ձևակերպումով: | | Ընդունվել է |
| 10 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 6-րդ հոդված | Նախագծի 6-րդ հոդվածում « <i>հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը</i> » ձևակերպումը փոխարինել « <i>հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը</i> » ձևակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածը: | | Ընդունվել է |